

ԳՆԻՇԻԿ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Եղիսաբեթ Խաչատրյան
Հեռախոս՝ +37493 883381

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գնիշիկ բնակավայրն իր մեջ ընդգրկում է Գնիշիկ և Մոզրով գյուղերը: Գտնվում է մարզկենտրոնից 24կմ հեռավորության վրա, հարավ արևմտյան մասում սահմանակից է մարզի Եղեգնաձոր քաղաքին և Արփի, Ագարագաձոր, Խնձորուտ, Խաչիկ, Արենի, Աղավնաձոր գյուղերին, ինչպես նաև Վայոց ձորի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքի՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:

Օովի մակերեսներից գտնվում է 2060մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է՝ ձմռանը մեղմ է, բայց ձյունառատ, իսկ ամռանը զով է: Գնիշիկ գյուղի բնակիչների մի մասը ձմռանը տեղափոխվում են այլ բնակավայրեր:

Զբաղվածության ոլորտներն են՝ գյուղատնտեսությունը, անասնապահությունը և մեղվաբուծությունը: Վարչական տարածքը կազմում է 6417հա: Գնիշիկն իր պատմության ընթացքում մի քանի անգամ կառուցվել և քանդվել է, այդ են վկայում տարբեր գրականություններից մեզ հասած տվյալները և գյուղի տարածքում գտնվող 9-13-րդ դարերին վերագրվող եկեղեցին, մատուռները, ջրաղացները և պատմական տարբեր ժամանակաշրջաններին վերագրվող դամբարանադաշտերը, գերեզմանոցները, խաչքարերը,

Չնայած այն բանին, որ գյուղի տարածքում առկա են 4-րդ և 5-րդ դարերի խաչքարեր, սակայն ըստ պատմաժի՝ նախավերջին անգամ գյուղը վերակառուցվել է 1770- ական թվականներին: Բնակիչները եկել են Նախիջևանից, Արցախից, Ալաշկերտից և այլ տեղերից: 1950 ական թվականներին գյուղում 150 ծուխ է հաշվառվել:

Նախկին Եղեգնաձորի շրջանի հացահատիկի զգալի մասը մթերվում էր հենց Գնիշիկ գյուղից, որի համար էլ գյուղը համարվել է մեր տարածաշրջանի «Հացի շտեմարանը»: 1960 ական թվականներից սկսած տարածքի սողանքի պատճառով գյուղի բնակչությունը տարիների ընթացքում տեղափոխվել է Արփա գետի հովտում կառուցվող Արփի գյուղը: 1975 թվականին Գնիշիկ և Արփի գյուղերի մեջտեղում կառուցվել է ևս մեկ գյուղ՝ Մոզրովը: Գնիշիկցիների մեծ մասը տեղափոխվել է Արփի, իսկ մնացած մասը՝ Մոզրով:

Գնիշիկը 13-րդ դարում եղել է Օրբելյան Իշխանների ամառանոցը: Ինչպես նշվեց վերևում՝ Մոզրով գյուղը հիմնվել է 1975 թվականին, 1988-90 ականներին ունեցել է մոտ 35 տնտեսություն, որոնց զբաղվածությունը հիմնականում եղել է անասնապահությունը: 1991 թվականին կազմավորվել է Գնիշիկի համայնքը, Գնիշիկ և Մոզրով գյուղերի ընդգրկումով: Գյուղն ունի հիմնական դպրոց:

Գնիշիկում են գտնվում Քարկոփի եկեղեցին, մատուռի ավերակներ և 9-18-րդ դարերի խաչքարեր: Գյուղից մոտ 10 կմ հյուսիս-արևելք՝ Հարսնասարի վրա գտնվում են Հրասեկաբերդի ավերակները:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Գնիշիկ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 40 հուշարձան: